Ցանկանո՞ւմ եք աշխատել Գերմանիայի խորհրդարանում:

Գերմանիայի Բունդեսթագը Բեռլինի ազատ համալսարանի, Բեռլինի Հումբոլդ համալսարանի և Բեռլինի տեխնիկական համալսարանի հետ համատեղ **Միջազգային խորհրդարանական կրթաթոշակի (ՄԽԿ)** միջոցով հինգ ամսով հրավիրում է Ձեզ Բեռլին:

Միջազգային խորհրդարանական կրթաթոշակը նախատեսված է բարձրագույն որակավորում ունեցող և քաղաքականությամբ հետաքրքրվող երիտասարդ աղջիկների ու տղաների համար, որոնք ցանկանում են ակտիվորեն ու պատասխանատվության զգացումով կերտել իրենց երկրի ժողովրդավարական ապագան:
Գերմանիայի խորհրդարանը՝ Բունդեսթագը, երիտասարդներին հնարավորություն է տալիս Բունդեսթագի անդամներից մեկի մոտ 15-շաբաթյա գործունեության ընթացքում ծանոթանալ Գերմանիայի խորհրդարանական համակարգին և քաղաքական որոշումների կայացման գործընթացին, ինչպես նաև փորձառություն ձեռք բերել խորհրդարանական աշխատանքների ասպարեզում:
Կրթաթոշակակիրների ընտրությունը կատարում է Գերմանիայի Բունդեսթագի կողմից կազմված անկախ ընտրական հանձնախումբը:

Նախապայմաններն են՝
- Հայաստանի քաղաքացիություն
- համալսարանական կրթություն
- գերմաներենի շատ լավ իմացություն
- կրթաթոշակ ստանալու պահին 30 տարեկանը լրացած չպետք է լինի

Կրթաթոշակը՝
- ամսական 450 եվրո
- բնակարանային ծախսեր
- ապահովագրական և ճանապարհային ծախսեր

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 30-ը հունիսի

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այս էջի հետադարձ կողմում, Գերմանիայի դեսպանատնից կամ համացանցային հետևյալ կայքից՝
www.bundestag.de/ips

IPS Internationales Parlaments-Stipendium des Deutschen Bundestages

www.bundestag.de/ips

Version Armenisch